ՆԱՏՕ-ի օդային տարածքում հայտնված ԱԹՍ-ների մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 12.10.2025 թ.[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ կենտրոնի վերլուծությունն արծարծում է 2025 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՆԱՏՕ-ի օդային տարածքում չճանաչված անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) հետ կապված մի շարք միջադեպերը: Վերլուծվում է հակասական տեղեկատվական դաշտը, տարիմաստ հասարակական արձագանքները Եվրոպայի տարբեր երկրներում և, որ ամենակարևորն է, դաշինքի ՀՕՊ համակարգերի փաստացի անգործությունը: Հիմնական թեզն այն է, որ միջադեպերը, անկախ դրանց հեղինակից, խորը համակարգային ճգնաժամ են բացահայտում ՆԱՏՕ-ի ներսում: Վերլուծվում են այնպիսի ոչ բնականոն երևույթներ, ինչպիսիք են ԱԹՍ-ների խափանումների բացակայությունը և «Դրոնների պատի» ստեղծման մասին խոսույթի անհապաղ ի հայտ գալը: Եզրակացվում է, որ դաշինքի՝ սեփական օդային տարածքը վերահսկելու անկարողությունը վկայում է կա՛մ համակարգային ճգնաժամի, կա՛մ նրա գործառույթների կանխամտածված վատթարացման մասին՝ հնարավոր է և՛ ներքին, և՛ արտաքին դերակատարների մասնակցությամբ:

Բանալի բառեր. *ՆԱՏՕ, դրոն, ԱԹՍ, օդային տարածք, հիբրիդային պատերազմ, անվտանգության ճգնաժամ, Ռուսաստան, Ուկրաինա, ապատեղեկատվություն, Դրոնների պատ:*

1. Ներածություն. նախնական իրավիճակ

2025 թ. սեպտեմբերի սկզբից ԵՄ օդային տարածքում չնույնականացված ԱԹՍ-ների հետ կապված միջադեպերը նոր իրականություն են ստեղծել ՌԴ–Արևմուտք դիմակայությունում: Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին անգամ եվրոպական երկրները բախվում են նոր, բնույթով ավելի կործանարար հակամարտության նշաններին:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 09.10.2025 թ.:

Առանցքային հարցը ոչ թե այն է, թե, արդյոք, Ռուսաստանի Դաշնությո՞ւնն է կազմակերպում այդ խախտումները, ինչպես կասկածում է ՆԱՏՕ-ի երկրների մեծ մասում, թե՞ դաշինքի որոշ ուժեր միտումնավոր կերպով սադրանքներ են իրականացնում Մոսկվայի անունից, որի շահագրգռվածությունը նման ձեռնարկներում կասկածանք է հարուցում: Օրակարգային խնդիրն այլ է. այսուհետ Եվրոպան չի կարող հույս դնել Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմական գոտուց իր երաշխավորված հեռավորության վրա՝ կրելով, ինչպես ներկայումս է, ռուս-ուկրաինական հակամարտության միայն ֆինանսական բեռը:

Եվրոպան բախվել է ապագա պատերազմի գլխավոր ասպարեզի վերածվելու և, հետևաբար, կրկին աշխարհի նոր բաժանման թիրախ դառնալու իրական վտանգի հետ: Ով էլ որ կանգնած լինի անօդաչու թռչող սարքերի թռիչքների հետևում, նրանց ուղերձը պարզ է՝ ԵՄ-ը չի կարողանա խուսափել պատերազմից, եթե շարունակի սրել ռուս-ուկրաինական հակամարտությունը: Ավելին, թռիչքների աշխարհագրությունը և ժամանակագրությունը գրեթե ճշգրիտ կերպով վերարտադրում են Երկրորդ աշխարհամարտի եվրոպական ամենակարևոր մարտադաշտերն ու հաջորդականությունը՝ Լեհաստանից և Սկանդինավիայից մինչև Բելգիա ու ֆրանսիական Դյունկերկ, որի համար մղված երկու մարտերը խորհրդանշականորեն նշանավորեցին Եվրոպայում գերիշխանություն հաստատելու Ա. Հիտլերի ջանքերի սկիզբն ու ավարտը:

2. Տեղեկատվական դաշտի և հանրային արձագանքների վերլուծություն

Փորձագետների կարծիքով՝ շարքային եվրոպացին չի կարող նույն կերպ գնահատել ռուս-ուկրաինական հիմնախնդիրը «*չնույնականացված*» ԱԹՍ-ներով միջադեպերից առաջ և հետո: Համանման դինամիկա պետք է ակնկալել նաև ռուս-ուկրաինական օրակարգի վերաբերյալ ԵՄ բարձրագույն մարմինների մոտեցումներում: Գոյութենական սպառնալիքի զգացումը փոխել է շատ եվրոպացիների վերաբերմունքը ռուսական գործոնի նկատմամբ, ընդ որում՝ տրամագծորեն հակառակ ուղղություններով: Եթե բալկանյան երկրների, Սկանդինավիայի և Կենտրոնական Եվրոպայի հանրություններն ավելի վաղ բարեհաճ էին վերաբերվում ռուսաստանցիներին և անհրաժեշտ չէին համարում ուղղակի միջամտությունն ուկրաինական օրակարգին, ապա ԵՄ երկնքում անօդաչուների հայտնվելուց հետո չեզոքության կողմնակիցների քանակը նվազել է, մինչդեռ սկսել է աճել Կիևի հետ Բրյուսելի համերաշխության կողմնակիցների թիվը:

Հանրային տրամադրությունները հակառակ ուղղությամբ են զարգանում Լեհաստանում: 2025 թ. սեպտեմբերի 10-ին երկրի մի քանի շրջանների վրայով տասնյակ չճանաչված անօդաչու թռչող սարքերի թռիչքը բացասական վերաբերմունքի կտրուկ աճ է առաջ բերել Ուկրաինայի նկատմամբ, որին, համաձայն Վարշավայում և այլ քաղաքներում անցկացված բլից-հարցումների, բազմաթիվ լեհեր «*իբր ռուսական սարքերի*» արձակման

կազմակերպիչ են համարում: Ավելին, հարցումները ցույց են տվել իրենց երկիրը պաշտպանելու երիտասարդների պատրաստակամության նվազումը. հարցվածների մոտ մեկ երրորդը ցանկություն է հայտնել լքել երկիրը մինչ այն, երբ իրենց բանակ կզորակոչեն և կուղարկեն «*կռվելու ռուսների դեմ*»: Լեհ փորձագետների գնահատմամբ՝ նման միտումների հիմքում ընկած է ոչ թե երիտասարդության «*վախը*» կամ «*հակվածությունը գիրգ կյանքին*», այլ հիասթափությունը տեղական և, առհասարակ, արևմտյան քաղաքական գործիչներից, որոնք, ըստ քաղաքացիների, փորձում են Լեհաստանին ներքաշել վտանգավոր ռազմական հակամարտության մեջ:

Նման պատկեր է ձևավորվում բալթյան հանրապետություններում, որտեղ հասարակությունը և քաղաքական գործիչները ռուսաստանյան սադրանքի վարկածը չափազանց մակերեսային են համարում ու Ռուսաստան–Ուկրաինա պատերազմից ԵՄ-ի հեռացմանն ուղղված Մոսկվայի շահերին չհամապատասխանող: Դրանով իսկ, տարիմաստորեն, ԱԹՍ-ների հետ կապված միջադեպերի արդյունքները հակասում են ավանդաբար ուժեղ հակառուսական տրամադրություններ ունեցող երկրներում ակնկալվող արդյունքին՝ դժգոհություն և անվստահության աճ առաջ բերելով Կիևի և Արևմուտքի քաղաքականության նկատմամբ:

3. Վերլուծության և տվյալների հավաստիության ստուգման եղանակներ

«*Տեղեկատվական աղմուկի*» և ապակողմնորոշիչ տեղեկատվության զանգվածային հոսքերի պայմաններում շատ դժվար է միայն բաց աղբյուրների հիման վրա արժանահավատորեն բացահայտել այդ ձեռնարկների կազմակերպիչներին: Շրջանառվող տեղեկատվությունը ծայր աստիճան հակասական է և աչքի է ընկնում անտրամաբանական եզրակացություններով: Օրինակ, գերմանական ԶԼՄ-ները հայտնում են Խորվաթիայի մի քաղաքացու ձերբակալության մասին, ով դրոն էր կառավարում Բավարիայի ռազմական օբյեկտների վրա, բայց այդ գործողության կազմակերպման մեջ անմիջապես մեղադրում են Մոսկվային: Հարանման իրավիճակ. դանիական իշխանությունները Շվեդիայի քաղաքացիներին կասկածում են Կոպենհագենի օդանավակայանի վրա դրոնների կառավարման մեջ, ինչը, սակայն, երկրի ԶԼՄ-ներին չի խանգարում դրանում «բռնացնել» Ռուսաստանին:

Արևմտաեվրոպական մամուլը դրոններն անվանում է «*չնույնականացված*», սակայն միևնույն ժամանակ դրանք վերագրում է ՌԴ-ին՝ առանց բացատրելու, թե ինչպես են հարյուրավոր մարտական և հետախուզական ԱԹՍ-ները բերվել ԵՄ, և ինչպես են եվրոպացի քաղաքացիներ հավաքագրվել ու վարժվել դրանց գործարկման համար:

Տպավորություն է ստեղծվում, թե եվրոպական ԶԼՄ-ները հաճախ ուղղակի վերարարտադրում են Ուկրաինայի ԱԳՆ-ի խոսույթները ՌԴ-ի կողմից «*«խլուրդների» և*

գործակալների» ներթափանցման մասին, ովքեր «*պատասխանատու են օդանավակայանների և ռազմակայանների վրայով անօդաչուների թռիչքների համար*»:

Միևնույն ժամանակ, ռուսական կողմը քիչ հետաքրքրություն է ցուցաբերում այդ մեղադրանքները հերքելու հարցում: Եթե Մոսկվան իրոք կապ չունի տեղի ունեցածի հետ, թերևս իմաստ էլ չի տեսնում ներուժ վատնել մի հերքման վրա, որը, անկասկած, ձախողվելու է՝ հաշվի առնելով ԵՄ քաղաքական շրջանակներում տիրող կարծրատիպային մտածողությունը: Չի բացառվում նաև, որ մասնակից չլինելով հանդերձ, Մոսկվան ձեռնտու է համարում խուճապային տրամադրությունների պահպանումը ԵՄ-ում: Իսկ եթե ենթադրենք, թե Ռուսաստանն է կանգնած թռիչքների հետևում, ապա հարկ է որպես գործողության առաջնային նպատակ համարել խուճապային տրամադրությունների առաջացումը, որոնք կոչված են հստակ ցուցադրել Եվրոպայի խոցելիությունը:

Գլխավոր ինտրիգն այն է, որ արևմտյան շրջանակները, որոնք տարածում են ԱԹՍ-ների միջադեպերում ռուսաստանյան հետքի վարկածը, մինչ այժմ չեն կարողացել այս վարկածը հաստատող որևէ էական ապացույց ներկայացնել: Պետք է հասկանալ նաև, որ ոչ Մոսկվան և ոչ էլ Կիևը չէին կարող մեկ ամսվա ընթացքում ինքնուրույն նման սադրանքներ կազմակերպել և իրականացնել՝ չվախենալով հեշտ և արագ բացահայտվելուց:

4. Առանցքային ցուցիչներ և ոչ բնականոն երևույթներ

Քանի որ երկու կողմերն էլ համոզիչ ապացույցներ չեն առաջարկում, ուստի հարկ է, որպեսզի վերլուծությունը կենտրոնանա հետևանքների և «*ոչ բնականոն երևույթների*» վրա: Այս համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում երեք հանգամանք.

4.1. «Դրոնների պատ» խոսույթի առաջացումը

Միջադեպերը խոսույթ են առաջացրել ԵՄ-ում, այսպես կոչված, «*Դրոնների պատ*» ստեղծելու անհրաժեշտության մասին կամ այլընտրանքային ծրագրի մշակման շուրջ՝ ստեղծելու միասնական, տեխնոլոգիապես առաջադեմ ՀՕՊ համակարգ, որը կապահովի օդային տարածքի շարունակական անվտանգությունը Հյուսիսային բևեռից մինչև Ջիբրալթար և Արևելյան Միջերկրականից մինչև Իսլանդիա: Կախված լուծման տարբերակներից, նշված տարածքի պաշտպանության որակից և կահավորման խտության աստիճանից, նմանատիպ պաշտպանական ծրագրի արժեքը, ըստ որոշ գնահատումների, կարող է տատանվել մի քանի հարյուր միլիարդից մինչև մեկ տրիլիոն ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ ՀՕՊ համակարգերի և ԱԹՍ-ների համաշխարհային շուկայում առաջատար դիրքերը պատկանում են ԱՄՆ-ին և Իսրայելին, ում ռազմաարդյունաբերական ընկերությունները տրամաբանորեն կդառնան նման պատվերների հիմնական շահառուներ:

4.2. ՆԱՏՕ-ի հակաօդային պաշտպանության համակարգերի պասիվությունը

Բացառությամբ Լեհաստանի, ԵՄ երկնքում ոչ մի անհայտ անօդաչու թռչող սարք չի

խոցվել կամ չեզոքացվել: Սա հարցեր է առաջացնում, քանզի երկրների մեծ մասի ղեկավարությունը սպառնալիքը որպես ռուսական է նույնականացրել: ՆԱՏՕ-ի ղեկավարությունն անհայտ պատճառներով նույնականացված սպառնալիքներից օրինական պաշտպանություն չի թույլատրել:

4.3. «Երկրորդ ճակատ» հայեցակարգի վերափոխումը

ԵՄ երկնքում ԱԹՍ-ների գործադրմամբ տեղի ունեցած միջադեպերը փաստորեն վերջ դրեցին Ռուսաստանի դեմ, այսպես կոչված, «*երկրորդ ճակատին*»: Եթե մինչ այդ շատ էր խոսվում ՌԴ կովկասյան ծայրամասերում դրա առաջացման անխուսափելիության մասին, ապա վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ Արևմուտք–ՌԴ բախման նոր հնարավոր գոտի կարող է դառնալ ռուս-եվրոպական սահմանի ցանկացած հատված: Իլհամ Ալիևի հակառուսական դեմարշները, ըստ էության, Մոսկվային չմղեցին Բաքվի հետ հարաբերությունները սրելուն: Միաժամանակ, Վրաստանում ձախողվեց արևմտամետ ընդդիմության՝ հեղափոխություն անելու վերջին հոկտեմբերյան փորձը, որը, ըստ փորձագետների մեծամասնության, Թբիլիսիին կդրդեր նոր պատերազմի մեջ մտնել Մոսկվայի: Փաստորեն, «*երկրորդ ճակատի*» գաղափարն այժմ առավել հեռանկարային է եվրոպական ուղղությամբ: Ընդ որում, պատմականորեն այնպես է դասավորվել, որ եվրոպական ուղղությամբ պատերազմները Մոսկվան միշտ սրբացրել է «*հայրենական*» որակմամբ, ինչը խթանում էր տիտղոսակիր ազգի համախմբումը և ապահովում սպառնալիքի համեմատաբար արագ չեզոքացումն ու հաղթանակը: Մինչդեռ հարավում (Կովկաս, Կենտրոնական Ասիա) Արևմուտքի կողմից Ռուսաստանի դեմ հրահրված հակամարտությունները ավանդաբար դիտարկվում էին որպես «*ռուսների մեծապետական զավթողական քաղաքականության*» դրսևորումներ և զուգորդվում էին կայսրությանը ներքին խնդիրներով սպառնացող մուսուլմանական ու թյուրքական հատվածների ապստամբությունների վտանգով:

5. Վարկածների ձևավորումը

Վերոնշյալ հանգամանքները ցույց են տալիս, որ եվրոպական երկնքում չճանաչված անօդաչու թռչող սարքերի պատմությունը զգալիորեն ավելի բարդ և խճճված է, քան փորձագետների մեծ մասի կողմից առաջարկվող իրադարձությունների երկու պարզունակ տարբերակները: Ըստ առաջինի՝ Ռուսաստանն իր անօդաչու սարքերով փորձում է ահաբեկել եվրոպական երկրներին և ստուգել նրանց զգոնությունը, երկրորդի համաձայն՝ Ուկրաինան ինքն է կազմակերպել այդ անօդաչու սարքերի հարձակումները՝ նպատակ ունենալով համախմբել Արևմուտքին ու ՌԴ-ի դեմ լայնածավալ պատերազմի սադրել:

Մինչդեռ մի շարք չտարածված, բայց չափազանց կարևոր տեղեկությունների առարկայական վերլուծությունը ցույց է տալիս, որ Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների հետևում կարող են կանգնած լինել ամենաանսպասելի

խաղացողներ, որոնք առաջ են մղում սեփական շահերն ի հեճուկս համաշխարհային հանրության ընկալման մեջ ձևավորված կարծրատիպերի: Եվրոպական մեծ խաղի խաղադրույքներն այնքան մեծ են, որ եվրոպական հանրությանը ՌԴ-ի հետ ուղղակի հակամարտության մեջ ներքաշելու նպատակով արևմտյան որոշ երկրների հետ Կիևի փոխգործակցության վարկածին զուգընթաց, ծագում են նաև տեղի ունեցողի, թվում է թե՝ անհավանական բացատրություններ: Դրանց թվում են՝

1. հնարավոր ետնաբեմային պայմանավորվածությունը Մոսկվայի և ՆԱՏՕ-ի առանձին անդամների միջև՝ վերակազմավորելու Արևելյան Եվրոպայում «*Սառը պատերազմից*» ժառանգած ուժերի դասավորումները և հավասարակշռությունը,

2. ռուս-ամերիկյան գաղտնի համագործակցությունը՝ վերստին կյանքի կոչելու սպառազինությունների համաշխարհային մրցավազքը՝ շոշափելի եկամուտ բերելով երկու պետություններին,

3. Ուկրաինայի ապագա մասնատման հարցում ՌԴ-ի և Լեհաստանի, Հունգարիայի ու Ռումինիայի միջև փոխգործակցությունը և այլն:

6. Եզրակացություն. ճգնաժամ, թե՞ դաշինքի քայքայում

Եվրոպայի շուրջ բարդ աշխարհաքաղաքական գործընթացների վերաբերյալ տարատեսակ կարծիքներն, իրոք, կարող են շատ լինել, և դրանցից նույնիսկ ամենաարտասովորներն ու հանդուգններն արժանի են քննարկման թեկուզ միայն այն պատճառով, որ ՆԱՏՕ-ի օդային տարածքի անվտանգության փլուզումը, որը նախկինում կարող էր ընկալվել որպես եզակի մի թյուրիմացություն, այժմ վերածվել է անհեթեթության:

Մի ամբողջ ամիս աշխարհի ամենաուժեղ ռազմական դաշինքի օդային տարածքը գրեթե պարբերաբար հատվում էր մարտական ԱԹՍ-ներով, որոնց արտադրող երկիրը «*հնարավոր չէ*» նույնականացնել, ինչպես նաև որոշել դրանց թռիչքների նպատակները, սարքերի՝ օդ բարձրանալու և հետագա վայրէջքների վայրերը: Այս մասին ասվում է ԱՄՆ պաշտպանության նախարարության հաղորդագրության մեջ: ՆԱՏՕ-ի ներսում դեռևս միասնական կարծիք չկա այն սպառնալիքների մասշտաբների մասին, որոնք բխում են ԵՄ ռազմավարական նշանակության օբյեկտներին հետևող դրոններից: Եվ նույնիսկ մեկ ամիս անց Եվրոպայում ոչ ոք չի համարձակվել խոցել այդ թշնամական օդային թիրախները, ինչպես դա թույլատրվում է ռազմական բլոկի կանոնադրությամբ, միջազգային իրավունքով և յուրաքանչյուր երկրի օրենսդրությամբ:

«Անհարմար» հարցեր շատ են կուտակվել Եվրոպայում «*չնույնականացված*» անօդաչուների հետ կապված պատմության մեջ, և արևմտյան ավանդական ՁԼՄ-ների համար բավական դժվար է այդ իրադարձությունները շաղկապել բացառապես ռուսական «*նեոկոմունիստական*» ռևիզիոնիզմի և «*պուտինյան վարչախմբի*» զավթողական նկրտումների հետ: Սովորական կլիշեները կորցնում են արդյունավետությունը, հատկապես այն երկրներում,

որոնք ամենամոտն են հասունացող նոր եվրոպական պատերազմի կիզակենտրոնին և արդեն անուղղակիորեն առնչվել են ուկրաինական իրադարձությունների հետ:

Եվրոպայի գլխավերևով թռչող ԱԹՍ-ները բացահայտեցին ոչ միայն և ոչ այնքան Հին աշխարհի պաշտպանական և օդային ծածկույթի թուլությունը, նման օրինակներ շատ կան հենց Ռուսաստանում, այլ ավելի շուտ ՆԱՏՕ-ի խորը ճգնաժամը և «*ռուսասպանյան սպառնալիքի*» առջև արևմտյան համերաշխության ու փոխադարձ աջակցության գաղափարի լճացումը: Հնարավոր է՝ սա Հյուսիսատլանտյան դաշինքի փլուզման նախակարապետն է, որի վրա աշխատելու ընթացքում Մոսկվան կարող է գործընկերներ ունենալ հենց դաշինքի ներսում: Իսկ եթե ենթադրենք, որ դրոններով գործողության հետևում, այնուամենայնիվ, կանգնած է Ուկրաինան, ապա խոսքն արդեն ոչ թե պարզապես ճգնաժամի, այլ ՆԱՏՕ-ի լիակատար քայքայման մասին է, որի քաղաքականությունն ունակ է շահարկել միջազգային քաղաքականության ամենևին էլ ոչ ամենաճանրաքաշ սուբյեկտը: